# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՈՒՆ N 3

«ԱՔ-ԲՏ-ՀՄԱ-ԱՊՁԲ-01/19» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի բացման նիստի

ք. Արմավիր

21.02.2019թ.
ժամը $17^{20}$

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Լ. Գրիգորյան,
Անդամներ՝ Պ. Տերտերյան, Ա. Հարությունյան,
Մրցույթի համակարգող՝ Ա. Թաշչյան:

1. **Հայտերի բացման և հայտեր ներկայացրած մասնակիցների մասին**

---

1.2 Հանձնաժողովի նախագահը հայտարարեց նիստը բացված և հրապարակեց գնման հայտով սահմանված՝ սույն ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների գները՝ մեկ թվով արտահայտված:

| Չ/բ N | Ապրանքի անվանումը | Նախահաշվային գին |
|---|---|---|
| 1 | Սեղմված բնական գազ | 832 500<br>(ութ հարյուր երեսուներկու հազար հինգ հարյուր) |

Հանձնաժողովի քարտուղարը տեղեկատվություն հաղորդեց գրանցամատյանում կատարված գրառումների մասին և Հանձնաժողովի նախագահին փոխանցեց հայտերի գրանցամատյանը, դրա անբաժանելի մասը հանդիսացող մյուս փաստաթղթերը և գրանցված հայտերը.

| N | Մասնակցի անունը | Հասցեն և կապի միջոցները | Հայտ ներկայացնելու ամսաթիվ, ժամ |
|---|---|---|---|
| 1 | <<ԳՈՒԴԳԱԶ>> ՍՊԸ | Ք. Արմավիր, Գորկու 148-1<br>Հեռ. 093-088-388<br>Էլ. փոստ armavirhhg@gmail.com | 2019 թվականի փետրվարի 19-ին<br>ժամը 11:19 |

Հանձնաժողովի նախագահը և անդամները գնահատեցին ծրարների համապատասխանությունը հրավերով սահմանված պահանջներին՝ հայտերը ներկայացվել են փակ սոսնձված ծրարով, ծրարի վրա հայտը կազմելու լեզվով կատարված են <<չբացել մինչև հայտերի բացման նիստը>> գրառումը, ընթացակարգի ծածկագիրը, մասնակցի անվանումը, գտնվելու վայրը, հեռախոսահամարը, ինչպես նաև պատվիրատուի անվանումը և հայտի ներկայացման վայրը (հասցեն):

Հանձնաժողովը որոշեց բացել ներկայացված հայտերը, հայտերը բացվել են 2019 թվականի փետրվարի 20-ին, ժամը 11:00-ին, քաղաք Արմավիր, Հանրապետության 32 հասցեում:

- Ընդունվել է որոշում կողմ 3, դեմ՝ 0

2. **Ծրարում պահանջվող (նախատեսված) փաստաթղթերի առկայության մասին**

---

2.1 Հանձնաժողովը արձանագրեց, որ <<ԳՈՒԴԳԱԶ>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված ծրարում հրավերով պահանջվող փաստաթղթերը առկա են և հավելված 3.1-ում առկա անհամապատասխանությունը մասնակիցը սահմանված ժամկետում ուղղել է:

3. **Գնային առաջարկների մասին**

---

3.1 Հանձնաժողովի նախագահը ներկայացրեց, <<ԳՈՒԴԳԱԶ>> ՍՊԸ-ի հայտով ներկայացված գնային առաջարկը՝ մեկ թվով արտահայտված, հիմք ընդունելով տառերով գրվածը:

| <<ԳՈՒԴԳԱԶ>> ՍՊԸ | | | | |
|---|---|---|---|---|
| Չափա-բաժինների համարներ ը | Ապրանքի անվանումը | Արժեքը (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) /տառերով և թվերով/ | ԱԱՀ** /տառերով և թվերով/ | Ընդհանուր գինը /տառերով և թվերով/ |
| 1 | 2 | 3 | 4 | 5=3+4 |
| 1 | **Սեղմված բնական գազ** | 633735 Վեց հարյուր երեսուներեք հազար յոթ հարյուր երեսունհինգ | 126765 Մեկ հարյուր քսանվեց հազար յոթ հարյուր վաթսունհինգ | 760500 Յոթ հարյուր վաթսուն հազար հինգ հարյուր |

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ <<ԳՈՒԴԳԱԶ>> ՍՊԸ-ի հայտով ներկայացված գնային առաջարկը չի գերազանցում գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցը՝ առաջարկված գնի նվազեցման նպատակով բանակցություններ չեն վարվել:

3.2 Հանձնաժողովը հիմք ընդունելով մասնակցի ներկայացրած գնային առաջարկը որոշեց առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել << ԳՈՒԴԳԱԶ>> ՍՊԸ-ին որպես նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից:

Ընդունվել է որոշում կողմ 3, դեմ՝ 0

4. **Առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացվող որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերի և Կոմիտեի կողմից տրամադրվող տեղեկատվության մասին**

---

4.1 Հանձնաժողովի քարտուղարը էլ. փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում «ԱՔ-ԲՏ-ՀՄԱ-ԱՊՁԲ-01/19» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի 8-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան:

5. **Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը ժամը և վայրը որոշելու մասին**

---

**5.1** Հանձնաժողովի քարտուղարն Կոմիտեից տեղեկատվության ստացման ավարտին հաջորդող աշխատանքային օրը էլեկտրոնային եղանակով հանձնաժողովի անդամներին միաժամանակ տրամադրում է գնահատման թերթիկների երկուական օրինակ և կոմիտեից ստացված տեղեկատվությունը: Հանձնաժողովը որոշեց հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրել ոչ ուշ, քան փաստաթղթերը հանձնաժողովի անդամներին տրամադրվելուն հաջորդող երրորդ աշխատանքային օրը ժամը 11:00-ին, քաղաք Արմավիր, Հանրապետության 32 հասցեում:

Ընդունվել է որոշում կողմ 3, դեմ՝ 0

Հանձնաժողովի
Նախագահ _______________ Լ. Գրիգորյան
Անդամներ՝ _______________ Պ. Տերտերյան
_______________ Ա. Հարությունյան

Մրցույթի
համակարգող _______________ Ա. Թաշչյան